

« պատատուած որ հոն տեղը մարդ գտնուիլը
 « չէր կրնար իմացուիլ : Զիս անոր քովը բազ-
 « մոցի մը վրայ նստեցուցին, եւ պառաւ կնոջ
 « մը զատ ուրիշ մարդ չմնաց հոն, ամենքն ալ
 « դուրս ելան : Հիւանդը առանց դժուարութեան
 « իմ հարցմանցս պատասխան տուաւ. եւ երբոր
 « իրեն իմացուցի որ կուգեմ երակը նայիլ,
 « ձեռքը երկընցուց. լեզուն ալ նայիլ ուզեցի,
 « հագիւ թէ երեսին քողը մեկդի առաւ ու լեզուն
 « ցուցուց : »

Տաճկաստանի մէջ տղայոց համար հասարակ
 հիւանդութիւններէն մեկը ծաղիկն է որ ամէն
 տարի շատ մը ջարդ կընէ, վասն զի պատուաստը
 (աշ) տերութեան քաղաքներէն դուրս ուրիշ տեղ
 ճանցցուած չէ : Վարդախտն ալ (զըզամուզ) շատ
 տղաք կըմեռցունէ : Մեծահասակներուն սովոր-
 ական հիւանդութիւնն է մեյամաղձոտութիւն
 (մերաք), որ դատարկութենէ, անշարժութենէ ու
 անկարգ կեանքէ առաջ կուգայ :

Ափիոն ուտողներ ալ շատ կան. ասոնք նախ
 օրը երկու ցորենահատի չափ կըկլլեն դեղահատի
 պէս, ետքը երթալով չափը կաւեցընեն : Ափիոն
 կլլողներուն քայուածքը երերկոտ է, կուզերնին
 դուրս ելած, անդամին դողդոջոտ, աչքերնին
 ներս մտած, իրենք մարմնոյ եւ մտքի ուժէն
 բոյրորովին ընկած, դեղնած եւ նիհար : Ափիոնին
 տուած զուարճութիւնը կարգէ դուրս զարմանալի
 բան պիտի ըլլայ որ այնպիսի սոսկալի վնասները
 յանձն կառնուն :

Հիւանդ բժշկելու համար շատ կըգործածուին
 նաեւ բժանքներ (համայիլ) : Ասոնք դուրանի խօս-
 քեր, եւ կամ մագաղաքի կտորներու վրայ
 գրուած ծածկաբանութիւններ ու գծեր են :
 Դեղքափը (փամզեհիր) գրեթէ ամէն տեսակ հիւան-
 դութեան տեղ կըսեպեն, եւ կարդացողի մը կամ
 տերվիշի մը փսփրսոցը յուսահատեալ հիւանդնե-

րուն անգամ առողջութիւն կուտայ կըսեն : Պար-
 սիկ, արաբացի ու եգիպտացի բժիշկները կեն-
 դանական մագնիսութեամբ շատ մը արեան
 ու ջրի հիւանդութիւններ բժշկելու կաշխատին՝
 մատուրնին հիւանդին վրայ պտըտցընելով,
 երեսին փչելով ու բըքքըքելով : Զերմը խիստ
 շատ անգամ դիւահարութեան տեղ կըղեն Տաճ-
 կըները, ու սատանան հիւանդին փորէն հանելու
 համար՝ բղթի կտորներու վրայ գրած աղօթքներ
 կլլել կուտան հիւանդին : Օփիէննայմ բժիշկը
 կըսէ թէ « Անատօլուի մէջ օր մը զիս տաճիկ
 « կարդացողի մը քով կանչեցին որ լերդի բոր-
 « բոքում ուներ սաստիկ : Հոն հանդիպեցայ նաեւ
 « անոր բժշկին որ բարձրահասակ վատուժ ու
 « դաժան մարդ մըն էր, եւ զիս հոն տեսնելուն
 « վրայ նեղացած ըլլալը երեսին վրայ յայտնի
 « կերեսնար : Ասիկայ դարձաւ հարցուց ինծի
 « խրոխտ կերպով մը թէ « Մարդուս աղիքները
 « ուր են : » Պատասխան տուի թէ « Պարկի մը
 « մէջ են : — Ամենեւին, ըսաւ Տաճիկը. լճակի
 « մը մէջ են. այս մարդուն լճակը չորցեր է,
 « աղիքները բորնկելու մօտ են. անա անկեց
 « յառաջ կուգան ծարար, տաքութիւնը, փո-
 « րացաւ, լեզուին ու մարմնոյն չորութիւնը :
 « Դուն շատ գէշ կընես որ կուգես այս հիւանդէն
 « արիւն առնել՝ որ հեղուկ է, ու փոշի տալ՝ որ
 « չոր բան է. այս հիւանդին ջրի դեղեր տալու
 « է : »

« Բոլոր հոն գտնուողները մատ խածին այն
 « խօսքերուն պարզ եւ իրաւացի ըլլալուն, եւ
 « այն զիտուն Տաճկին կարծիքը առաջ գնաց : »

Թարգմանեաց ի գաղղիականէ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՄՈՒԲԱՏԵԱՆՑ

Աշակերտ Արեւելեան Բազմալեզու Ազգային

Վարժարանին :

ԿԵՆՅԱՂՕԳՈՒՏ ԲԱՆՔ

Ս Տ Ո Ւ Ա Ր Ա Գ Ի Տ Ա Կ.


Որուն որ ձեռքը առաջին անգամ ստուարա-
 դիտակ մը անցեր ու անով բան մը դիտեր է,
 տարակոյս չկայ որ շատերուն պէս այս զար-

մացական խօսքերս բերնէն հանած է .

Ի՛նչ զարմանալի բան. ինչպէս ամէն առար-
 կաներ իրարմէ կըզատուին. սա ծառերուն մէջ

կարծես քե իրացընէ օդ ու միջոց կայ. սա սիւներուն մէջ կրնայ մէկը քայել. սա մարդուն շարժումը միայն պակաս է. արձանէն շատ աւելի լաւ է. ասիկայ բուն մարդն է, բուն առարկան է : Արդեօք որպիսի գիտութեամբ ու ճարտարութեամբ կըլլայ այս բանս. անշուշտ այս փոքրիկ գործւոյն մէջ շատ մը տեսարանական գործիք ու ապակիներ պիտի ըլլան :

Թէ որ քիչ մը հետաքրքրութիւննին աւելի սաստկանայ եւ ուզեն այն տղայոց նմանիլ որ ձեռքի խաղալիքնին կըզարնեն կըկտորեն, որպէս զի մէջինը տեսնեն. գործիքը կըքակեն կըբանան կըտեսնեն զարմացմամբ որ երկու խողովակի բերանը մէկ մէկ խոշորացոյց ոսպնածեւ ապակի կայ, եւ այն խողովակները կտրած բրգաձեւ տփիկի մը մէջ ազուցած են. տփիկին տակը մի եւ նոյն լուսանկար տեսարանէն կամ պատկերէն երկու



հատ քովէ քով կալած կըդրուի, դռնակն ալ կըբացուի որ դրուած պատկերին վրայ լոյս զարնէ :

Սնա բոլոր այս է մոգական գործւոյն նկարագիրը : Ուրեմն ինչէն է որ ամէն բան մէջը բարձր ուռած կերեւայ. ինչէն է որ երկու նկարը մէկ կերեւայ : Պատճառն յայտնի է, ինչպէս որ պիտի տեսնենք :

Ուրուագծի մը, նկարի մը վրայ ձր բանն է որ առարկաները դուրս կըցատքեցընէ, իրարմէ կըզատն ու խորութիւնները կըձեւացընէ. — լուսոյ եւ ստուերին պատշաճ բաժանումը եւ մարմնոց իւրաքանչիւր մասանց իրարմէ ունեցած պատշաճ հեռաւորութիւնն է. դիւրաւ կըհասկընան ըսածնիս անոնք որ ճարտար նկարչի մը պատկերը

դիտեր են ուշադրութեամբ եւ կամ նոր դիտեն : Արդ լուսանկար կամ տակեռատիպ պատկերի մը վրայ բոլոր այս լուսոյ, ստուերի եւ հեռաւորութեանց համեմատութիւններն բնականապէս ամենաճիշդ կերպով ելած են, որ պարզ աչքով ալ կերեւան եթէ լաւ մը դիտելու ըլլանք :

Գիտնալու է քե ձր եւ իցէ մարմին բարձրաքանդակ տեսնելու համար ամենաճարկաւոր է նոյն մարմինը երկու աչքով դիտել. վասն զի բարձր քանդակները կողերով կըձեւանան, եւ կարելի չէ որ մինակ մէկ աչքը մարմնոյն բոլոր այն բարձր քանդակները ձեւացընող կողմերը տեսնէ : Ասոր ալ փորձը ամենադիւրին է. աչքիդ մէկը գոցէ, մէկալովը ոսկեղօծ շրջանակի մը բարձրաքանդակ ծաղիկները դիտէ. զանոնք նկարածի պէս տափակ կըտեսնես. բաց մէկայ աչքդ ալ եւ այնպէս դիտէ, անոնց ուռած քանդակած ըլլալը կըտեսնես : Եւ որովհետեւ կողերը պատկերներու մէջ շատ անգամ իրենց պզտիկութեամբը աչքի չեն տեսնուիր, ստուարադիտակին խողովակներուն բերանը խոշորցընող ապակիներ դրուած են : Ասկեց կըհետեւի որ միականիները, այսինքն մէկ աչք ունեցողները, բարձրաքանդակ չեն կրնար տեսնել ոչ աչքով եւ ոչ ստուարադիտակով :

Հիմա կըմնայ մեկնել քե ինչպէս երկու պատկերը մէկ կըտեսնենք : Ասոր ալ պատճառը ամենայայտնի է. ձր եւ իցէ մարմին որ երկու աչքով դիտենք՝ միշտ մէկ կըտեսնենք. եւ երբոր նոյն մարմինը ամէն մէկ աչքով զատ զատ դիտենք՝ տարբեր դիրքերով կըտեսնենք : Ասոր փորձն ալ ամէն մարդ կրնայ ընել. գոցէ աչքիդ մէկը, մէկալով ցուցամատդ կէս կանգնոյ չափ աչքեդ հեռացուր ու դիտէ. յետոյ անիկայ գոցէ, միւսը բաց, անով նոյն մատդ նոյն դրքի մէջ դիտէ. կըտեսնես որ առաջին դիրքն ունեցող մատդ չէ. եւ երբոր երկու աչքով մէկէն դիտես՝ մի եւ նոյն դիրքով մի եւ նոյն մատդ կըտեսնես. վասն զի այն զատ զատ տեսնուող մատուրներէն ելած լուսոյ շառաւիղները մէկգմէկ կուզան կըկտորեն եւ այն կտրած տեղը երկու աչքին տեսութիւնը միանալով՝ երկու մատուրները մէկ կըտեսնեն : Սնա մի եւ նոյն կերպով նաեւ երկու աչքով դիտած ատեննիս ստուարադիտակին մէջի երկու մարմինը կամ պատկերը մէկ կըտեսնենք :

Այս ալ ըսենք քե ինչո՞ւ համար խոշորացոյց ապակիները տեսակ մը խողովակներու վրայ դրուած են : Ասոր ալ պատճառը բնական փորձի

մը վրայ հաստատուած է. երբոր գիտնական մարդիկ որ եւ իցէ առարկայ կուգեն լաւ դիտել, ձեռքերնին կըրելով տեսակ մը խողովակ կը- ձեւացընեն, եւ յարմար լուսով տեղ մը կեցած՝ նոյն առարկան կըդիտեն, որով եւ շատ աւելի պայծառ ու որոշ կըտեսնեն, ինչպէս որ ամէն մարդ փորձը կրնայ ընել : Այսպէս ձեռուրնիս կըրելով աւելի լաւ տեսնելուս պատճառն այն է որ երբ առարկայ մը առանձին մինակ դիտուի, շատ աւելի որոշ կըտեսնուի, վասն զի ձեռքին կըրածը կամ խողովակն աչքերնէս օտար առարկաները հեռացընելով՝ բոլոր ուշադրութիւննիս դիտուած առարկային վրայ կամփոփուի, եւ աչքերնուս մէջ դրսի լուսոյն ճառագայթները՝ դիտուած առարկայէն ելած ճառագայթներուն հետ կըխառնուին. այն լուսոյ ճառագայթից խառնումը շատ աւելի կատարեալ կըլլայ՝ քե որ առարկան կամ պատկերը մութ սենեկի մը մէջ

դրուի՝ որոյ պատերը ստուարադիտակին պէս սեւ ներկած ըլլան, եւ լոյսն անանկ մէջը զարնէ՝ որ պատկերը միայն լուսաւորէ, ինչպէս է ստուարադիտակին դռնէն եկած լոյսը :

Արդ կըմնայ մեզ ըսել քե ստուարադիտակին մէջ գործածուելու լուսանկարներն ու պատկերներն ինչպէս կըհանեն. երկու պատկերներէն մէկը սովորականի պէս տակեռատիպ գործիքով հանելէն յետոյ, աչքերուն իրարմէ ունեցած հեռաւորութեամբը երեք անգամին չափ գործիքը առաջին կեցած տեղէն ուղիղ գծով հեռացընելու, եւ նոյն պատկերը նորէն հանելու է առաջնոյն անմիջապէս քովը :

Ստուարադիտակը հնարեց 1851ին Պրուսքըր ամերիկացի բնագետը. նոյն տարին բոլոր եւրոպա տարածուեցաւ, եւ մինչեւ հիմա ամենուն ձեռքն է :

ԲԱՆԱԼԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԵԱՅ .

(Շարայարութիւն. Տես էջ 43.)

ՇՈԳԻԱՅՈՒԹՄՆ.

Շոգիացումն ինչ է :

— Ճիշդ խօսելով՝ շոգիացումն կըսուի ազատ օդի մէջ եւ առանց եփ ելլելու շոգիին ձեւանալը :

Շոգիացումը ինչ պարագաներու մէջ դիւրին կըլլայ :

Ա. — Երբոր մակերեւոյթը ընդարձակ է. — ուստի որչափ որ մակերեւոյթը ընդարձակ է՝ շոգիացումն ալ այնչափ շատ կըլլայ .

Բ. — Երբոր տաքութեան աստիճանը բարձր է. — անոր համար արուեստից մէջ շոգիացընելու մեծ հնարքը տաքցընելն է .

Գ. — Երբոր օդը չոր է. — ուստի երբոր օդը խոնաւութեամբ լեցուած է՝ շոգիացումը կարելի չըլլար, բայց եթէ շոգին տաքցընելով ստիպես որ վեր բարձրանայ .

Դ. — Երբոր օդը փոփոխուի, եւ Ն, երբոր օդը անօսրանայ :

Ինչէն է որ չայր կամ սուրճը աւելի շուտ կը պաղին սկահակին մէջ քան քե գաւաթի մէջ :

— Վասն զի սկահակին մակերեւոյթը գաւաթին մակերեւութէն աւելի ընդարձակ է, եւ մակերեւութին ընդարձակ ըլլալովը շոգիացումը կը դիւրանայ :

Ինչէն է որ արեւը սաստիկ տաք եղած ատենը՝ բոյսերը, գետինը եւ ամէն բան կըջորցընէ :

— Վասն զի արեւու ճառագայթներուն տաքութենէն՝ այն նիւթոց մէջ որչափ հոսանուտներ որ կան շոգի կըդառնան :

Ինչէն է որ հովը քաց լաքերը կըջորցընէ :

— Վասն զի արդէն ձեւացած շոգին կալի կըտանի, այնպէս որ խոնաւ մակերեւոյթները միշտ չոր օդի մէջ կըգտնուին :

Կիմացուի որ օդը ինքը խոնաւ պիտի չըլլայ :

Ինչէն է որ հով չեղած ատեն դուրս տեղ դրուած լաքերը կամաց կըջորնան :

— Վասն զի օդը լաքերուն վրայէն կամաց անցնելով՝ անոնց երեսէն ելած շոգին ալ կամաց կամաց կըտանի :

Լուացարաններու մէջ շինուած չորանոցներուն պատուհանները ինչո՞ւ համար վանդակներով կը- գոցեն :

— Որպէս զի անոնց մէջի օդը անդադար փոխուի, եւ հոն փռուած լաքերուն քաց քաց երեսին վրայէն շոգին ալուի :